

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մայիս ամսին Աթենքի համալսարանի արտոնությամբ հունարեն լեզվով Աթենքում լույս տեսավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսուչ արժանապատիվ Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանի «Հայ Եկեղեցու վերաբերմունքը սրբապատկերների նկատմամբ» դոկտորական թեզը:

Աշխատանքը պաշտպանվել է Աթենքի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետում և արժանացել «շատ լավ» գնահատականի 1987 թվականի մայիսի 20-ին:

Տ. Եզնիկ քահանայի սույն աշխատությունը յուրատեսակ ուսի պարզաբանել Հայ Եկեղեցու դավանաբանական-ծիսական վերաբերմունքը սրբապատկերների նկատմամբ՝ համեմատության համար անդրադառնալով քույր Եկեղեցիների, հատկապես Բյուզանդական Եկեղեցու դիրքին:

Ուսումնասիրությունը բաղկացած է 360 էջից և ունի հետևյալ ընդգրկումը. Հայաստանի քաղաքական և եկեղեցական վիճակը Զ—ԺԲ դարերում, Հիմնական աղբյուրները, Հայ Եկեղեցու դիրքը Դ Տիեզերական ժողովի դավանաբանական որոշումների նկատմամբ և Հայ Եկեղեցու քրիստոսաբանությունը մինչև Ը դար, Վկայություններ Հայ Եկեղեցում պատկերների գործածության մասին մինչև Ը դար, Պատկերամարտական-հերետիկոսական շարժումները Հայաստանում և Հայ Եկեղեցու կեցվածքը նրանց դեմ (Ե—Ը դդ.), Վկայություններ Հայ Եկեղեցում պատկերների գործածության մասին Թ-ից մինչև ԺԳ դարի սկիզբը, Հայ Եկեղեցու վերաբերմունքը սրբապատկերների նկատմամբ Թ-ից մինչև ԺԳ դարի սկիզբը:

Աշխատանքին կցված է նաև հավելված հիմնական աղբյուրները՝ հունարեն թարգմանությամբ: Ունի ամփոփում՝ անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով:

Աշխատության մեջ զետեղված են հայկական եկեղեցիներում աստվածաշնչական

բովանդակությամբ որմնանկարների, բարձրաքանդակների, ձեռագրական մանրանկարների, արժեքավոր տարբեր մետաղների վրա կատարված եկեղեցական արվեստի անկրկնելի գործերի մի շարք աչքի ընկնող նմուշներ: Աշխատության մեջ կան նաև պատմական Հայաստանին և նրան հարակից երկրներին վերաբերող քարտեզներ:

Աշխատության հեղինակը հանգամանորեն խոսում է նշված հարցերի շուրջ և ընդհանրապես եկեղեցիներում սրբապատկերների առկայության նշանակության և պատկերապաշտության միջև տարբերությունների մասին: Հայ Եկեղեցին ընդունում է պատկերների գոյությունը եկեղեցիներում, սակայն յուրովի մոտեցմամբ: Այս դեպքում պաշտվում է ոչ թե պատկերը, այլ պատկերի էությունը:

Տ. Եզնիկ քահանայի սույն աշխատությունը հանգամանալից պարզաբանումն է քրիստոնեական Եկեղեցիների և հատկապես Հայ Եկեղեցու՝ սրբապատկերների նկատմամբ վերաբերմունքի:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում և ողջունում է Տ. Եզնիկ քահանային՝ նրա այս հրատարակության առթիվ, և մաղթում, որ նրա գրիչը ավելի բեղմնավոր լինի:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ